Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
հունիսի 11 -ի N 660 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

2009 ԹՎԱԿԱՆԻՆ ԳԵՐՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՋՐԱՊԱՀԱՆՋԱՐԿ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող համայնքների ջրօգտագործողներին (այսուհետ՝ ջրօգտագործողներ) պետական աջակցության տրամադրման գործընթացի հետ կապված հարաբերությունները։

2. Ջրօգտագործողներին պետական աջակցությունը տրամադրվում է կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա։

3. Սույն կարգի համաձայն պետական աջակցությունը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի և Կոտայքի մարզերի գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող 70 համայնքի ջրօգտագործողներին՝ օգտագործած փաստացի ոռոգման ջրի դիմաց, բացառությամբ գերնորմատիվային ծախսի վճարումից, գերնորմատիվային ջրապահանջարկի չափով անհատույց դրամական հատկացումն է։

4. Պետական աջակցության սուբյեկտ են մինչև մեկ հեկտար (ներառյալ) հողատարածքները սեփականության, վարձակալության և (կամ) անհատույց օգտագործման իրավունքով տնօրինող գյուղատնտեսական հողօգտագործողները։

II. ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

5. Ջրօգտագործողներին պետական աջակցությունը տրամադրվում է գյուղատնտեսության ոլորտի կառավարման պետական լիազոր մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին), տեղական ինքնակառավարման մարմնի, ջրօգտագործողների ընկերության և ջրօգտագործողների միջև կնքված պետական աջակցության տրամադրման մասին պայմանագրերի հիման վրա։

6. Պայմանագրի ձևը (4 օրինակից) լիազոր մարմնի կողմից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվում է գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող համայնքների ղեկավարներին։

7. Պետական աջակցության տրամադրման գործընթացն իրականացվելու է հետևյալ փուլերով՝

1) գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող համայնքների ջրօգտագործողներին պետական աջակցության տրամադրման կարգի, գործընթացի և դրա պայմանների մասին իրազեկում.

2) երկշաբաթյա ժամկետում՝ գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող համայնքի ղեկավարի կողմից ջրօգտագործողների ընկերության գործադիր տնօրենի և ջրօգտագործողների ստորագրությամբ հայտը համապատասխան մարզպետին ներկայացնելը։ Վերջինիս կողմից հայտը (որը ներառում է համայնքի անվանումը, ջրօգտագործողի ազգանունը, անունը, ջրօգտագործման պայմանագրի համարը, ոռոգվող հողատարածքի չափը՝ ըստ մշակաբույսերի, ոռոգման ջրի ընդհանուր պահանջարկը՝ առանձնացնելով գերնորմատիվային մասը՝ համաձայն նորմատիվային և գերնորմատիվային ջրապահանջարկի տարբերության հաշվարկների աղյուսակի), լիազոր մարմնի ղեկավարին ներկայացնելը.

3) ջրօգտագործողներին պետական աջակցության տրամադրման մասին պայմանագրի կնքում՝ ջրօգտագործողների, ջրօգտագործողների ընկերության, համայնքի ղեկավարի և լիազոր մարմնի կողմից.

4) մինչև 2009 թվականի նոյեմբերի 25-ը, համայնքի ղեկավարի կողմից ջրօգտագործողների ընկերության գործադիր տնօրենի և ջրօգտագործողների ստորագրությամբ՝ ջրօգտագործողների օգտագործած փաստացի ոռոգման ջրի՝ առանց գերնորմատիվային ծախսի ծավալների դիմաց ամբողջական վճարումների և դրան համապատասխան պետական աջակցության չափի մասին մարզպետի կողմից տեղեկանքը լիազոր մարմնի ղեկավարին ներկայացնելը.

5) ներկայացված տեղեկանքի հիման վրա լիազոր մարմնի կողմից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում ջրօգտագործողների ընկերություններին ոռոգման ջրի գերնորմատիվային չափաբաժնին համապատասխան պետական աջակցության գումարի հատկացում։

8. 2009 թվականի նոյեմբերի 25-ից հետո լիազոր մարմնի կողմից տեղեկանք չի ընդունվում։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ